



ՄԻՀՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ. ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

(Սարդարապատի ներոսամարտի 54-րդ տարեղարձի առթիվ)

Ծուտով լրանում է Սարդարապատի ներոսամարտի փառավոր հայտանակի 54-րդ տարին: Այդ օրինական օրերին, հայազգի փրկության գործի մեջ իր մեծ ավանդն է դրեւ Էջմիածնի շրջանի աշխարհազորային-ների մեկ մեծ խմբի գլուխն անցած Գրամփա գյուղի քահանա տ. Հովհաննես Տեր-Մկրտչյանը:

Նա ծնվել է 1863 թվին Գրամփա գյուղում: Ակրանական կրթությունը ստացել է Էջմիածնի հնգամյա ծխական դպրոցում, աշնութեան ուսումը շարունակել է Հոփիսիմեի վանքի մի վարդապետի մոտ: «Առ ոստ աշակերտությամբ» շրու տարի սովորելոց հետո կյանք է մտնում պատրաստված, անհրաժեշտ գիտելիքներով: Այնուհետև զրադկում է ինքնազարգացմանը: Անուսանում, ունենում է երկու տղա և մեկ աղջիկ և ձեռնադրվում է քահանա 1895 թ.: Իր պարկեցու և համաստ բնավորությամբ վայելում էր և Էջմիածնի վանքի միաբանության հարգանքը: Ամենայն հայոց կաթողիկոսները Բյուրականի ամստանցից վերադարձն իշխանում էին Օրա տանը և վայելում Օրա շերս Բյուրասիրությունը: Խրիմյան Հայրիկը առանձին սեր էր տածում այս քարձուահասակ և առնական քահանայի հանդեա: 1918 թվից Մայր Աթոռի կողմից տ. Հով-

հաննեսը նշանակվեց յոթ գյուղերի առաջնորդական տեղապահ: Անցան խաղաղ տարիներ, բոնիլեց առաջին համաշխարհային պատերազմը, ամեն ինչ տակն ու վրա եղավ: 1918 թ. տորբական բախաղանից փրկված հարյուր հազարավոր հայերի բնկորմերը հասան Էջմիածնին. մեր գյուղերը լցվեցին նրանցով: Տ. Հովհաննեսն քահանան նշանակված էր մեր ենթաշրջանում գործող որրանցցների տեսուչ և սովոր ժողովրդին պարենով մատակարարող կոմիտեի նախագահ: Նրա ջանքերով հազարավորները փրկվեցին սովոր:

Տաճիկների երևալը Էջմիածնի մատուցմնում միանգամից զգաստացք բոլորին: Արդեն 1918 թ. մայիսի 11-ին Մայր Աթոռի միաբանությունը գործի անցավ. վարդապետ և եպիսկոպոսներին գործուեց գյուղերը, որոնք հայրենասիրական վառ ճառերով ելույթ էին ունենում, ժողովրդին կոչ անում դիմելու ինքնապաշտպանության: Ես անձամբ լսել եմ հանգույցալ Գարեգին եպիսկոպոսը Հովհաննեսի կրակոտ ճառը և Հոփիսիմեի վանքում և Գրամփա գյուղի եկեղեցում, մի քանի գյուղերից հավաքված նոն քազմության առաջ: Մայիսի 22-ի վառ առավոտյան Մայր տաճարի զանգերի ոգևորիչ ղողաճներին միացան և Հոփիսիմե, և

Գայանե, և Շողակաթ վաճքերի և շրջանի բոլոր գյուղերի եկեղեցիների տագմապահար զանգարարությունները: Էջմիածն քաղաքում և շրջանի գյուղերում կյանքը նշան էր փոթորկահույզ ավելոծ ծովի, բոլոր տղամարդիկ դուրս էին եկեղեց հրապարակ, խոսում, վիճում, բորբոքվում էին: Մայր տաճարին մոտիկ հրապարակի (Մեղան) մեջտեղը «Քանքան»-ի արտեզյան ջրմորի վրա ընկած կես մետր բարձրության հասնող տաշած քարը ծառայեց որպես հոնտորների ամրիոն:

Մայիսի 22-ին, Մայր Աթոռի իշխանության թուլլուվությամբ, Գնորգյան մենարանի ուսանողների մաշարանը վեր էր ածվել աշխարհազորայինների ցուցակագրման կետի: Ցուցակագրվում էին մեծահասակներ ու պատահիներ (մինչև 40 տարեկանները որպես զինվորներ գտնվում էին ուազմանակատներում), գենք ստանում, հիսնյակ և հարյուրյակներով, ուսքով մեկնում Սարդարապատ: Խակ զենք ունեցողները Էջմիածնի հրապարակից ու գյուղերից տարերայնորեն իրենց գցում էին կովի դաշտ: Այդ օրերին Սարդարապատ տանող ճանապարհը նման էր ուստանելի գնացողների:

Այդ օրը ես էլ ցուցակագրվեցի, բայց ժամը 4-ին Սարդարապատի ուազմանակատի հրամանատարությունից կարգադրություն ստացվեց, որ դադարեցնեն աշխարհազորայինների առաքումը, որովհետև թուրքը գրլիումին շարդարակ նախանձել է, իսկ աշխարհազորայինները այնքան շատ են, որ հնարավոր չէ բոլորին կազմակերպել և օգտագործել ճակատի գծում:

Մայիսի 22-ին, արևո դեռ չծագած, Գրամփա գյուղի եկեղեցու զանգերը տագմապահար դողանշում էին: Անմիջապես գյուղի մեծահասակ տղամարդիկ գինված հավարկեցին եկեղեցու մոտ գտնված երկու դարավոր չիմարիների տակ, միաժամանակ տերենոր առաջարկով սուրբանդակներ ուղարկեցին շրջակա մոտիկ վեց գյուղերը, հանուն ազգի, հանուն իրենց զավակների փրկության, շտապ գալու և միանալու իրենց:

Կարճ ժամանակարկությունում վեց գյուղերի գինված աշխարհազորայինները, ով իմաշով որ կարող էր, ուտելիքի և փամփուշի պաշարով եկան միացան մեր գյուղացիներին: Այդ ժամին տ. Հովհաննեսը անձնաշելի էր դարձել, իր ազդով մենքը նա նման էր քաջ զորավարի՝ իր գեն ու զրամի մեջ: Տեր հայրը դիմեց քաջերին կարճ ճառով, օրինակ թերեց Ավարայրի ճակատամարտը, թշնամու դամանությունը Արևմտահայաստանում, այստեղ մնացած հայ ազգի ընաշնչաման և Էջմիածնի սրբավայրերին սպառնացող վտանգը: Ապա, խաչը ձեռքն

առավ, օրինեց բոլորին և առաջ ընկալի: Նրան մետևեցին 150 աշխարհազորայինները: Անցնելով Սամաղար, Հայքաղ և Քյորփաղու գյուղերի միջով, խորին միացան ևս 50 մոգի և 200 մոգու գլուխն անցած, քափ ու բրտիների մեջ կորած ժամը 12-ին հասան Սարդարապատ: Ռազմաճակատի գորակիամանատար Դամիել-Ենգ Փիրումբանը տերմոր իսմրին սիրով ընդունեց և հրանց կցեց այսպես կոչված «մահապարտների» 5-րդ գնդին:

S. Հովհաննեսը իր խմբով դիրքերից դուրս չեկավ, մասնակցեց բոլոր ճակատամարտներին, մայիսի 22-ից մինչև 28-ը, մինչ թշնամուն շարդելով շիացրին Ալեքսանդրապոլի: Վերադաս մարմինների կարգադրությամբ, հայ բանակին թոյլ չտրվեց հետապնդելու թշնամուն, որը Աղինի կայարանուն կանգ առավ: Զորահրամանատար Դամիել-Ենգ Փիրումբանը տ. Հովհաննեսին իր խըրուվ հավաքեց իր շորջը, ամրող բանակի առաջ նախ բունեց աշը, համրութեց ճակատը, շնորհակալություն հայտնեց խմբի աշխարհազորայիններին, ասելով. «Տեր հայ, թեև հայ բանակը եռակի անզամ փոքր էր թշնամու բանակից, բայց ձեր նման հոգնոր հայրերի և աշխարհազորային հայ ու պատերի անձնազնի կերպով մարտերին մասնակցելը այնքան ուժ ու եռանդ ներշնչեց նրա հոգում, որ նա անհայտելի և անխոցելի դարձավ: Բարի ճանապարհ և խաղաղություն ձեզ»: Բանակի մարտիկների «ուռա»-ների տակ խումբը գնացք հատեց դիպի Էջմիածնին:

Հովհանի 4-ին Բաթումում կնքված հաշտությունը երկար չտևեց: Սարդարապատում կրած պարտության վրեմբ թուրքերը ցանկանուն էին լուծել, միայն հարմար պահ էին փնտրում:

Ընքի փաշան Սարդարապատում շարդրված իր դիվիզիան համալրելով, հունիսի 15-ին, գիշերը, այն մոտեցնում է Քյորփաղու գյուղի մոտ մեր սահմանին և առավտյան հարձակում գործում: Սահմանապահները՝ այգեստերերի մետ պաշտպանվում են, մինչև գյուղի մեծ ու փոքր հասնում են օգնության: Մյուս կողմից էլ Էջմիածնում գտնված 5-րդ և Սամաղարում պարտիզանական գնդեր 5 թնդանոթով նոյնական տեղ հասան, որոնցից երկուսը Զեյվա գյուղից, երկուսը՝ Քյորփաղուի, և մեկն է դաշտերի միջից շամթ ու կրակ էին թափում թշնամու գլխին. միաժամանակ Էջմիածնից և շրջակա գյուղերից աշխարհազորայինների հոսանքը ձգվում է Քյորփաղու և միանում երեք կիլոմետր երկարությամբ խաղողի այգեստերի մեջ դիրքեր բռնած հայ կովկաներին: Քյորփաղուից գաղթվածների շարանը հասավ Գրամփա: S. Հովհաննե-

սը իր ամելիքը գիտեր, անմիջապես եկեղեցու զանգերի միջոցով տագնապ բարձրացրեց: Մեր գյուղացիները անմիջապես զինված հավաքվեցին շինարիների տակ, սուրբանիակների միջոցով նորից վեց գյուղերից էլ եկան-միացան մերոնց: Տ. Հովհաննեսը Սարդարապատի օրերի նման նոյնպես զինվեց, խմբի զուխն անցավ: Սրբնաց ժամը 1-ին 150 աշխարհազորայիններով Քյորփալու գյուղից դուրս եկավ, բաց դաշտով արշավեց դեպի ռազմավայր՝ այգիները, որ տեղի էին ունենում կատաղի մարտեր:

Տեր Հովհաննեսի խմբի աշխարհազորայինների օգնության լուրը տարածվեց ռազմակատի մեկ գլխից մինչև մյուսը: Հայերը խանդակաված, նոր ոգի և շունչ առան, ჩերսական անձնազորությամբ, «ուոա»-ներով, գրունեցին թուրքերի վրա և նրանց նուշարտեցին իրենց եկման դիրքերը:

Փառավոր հաղթանակ տարած զորամասերին ընդհանրապես, իսկ ու Հովհաննես քահանայի խմբին հատկապես, գյուղերի միջով վերադառնալիս ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց, որպես ազատարար բանակի, և «ուոա»-ներով ճամապարհեց:

Հայ ժողովորդի կենաց և մահու կովին Էջմիածինի շրջանի գյուղացիությունը ընդհանրապես և Գրամփայի գյուղացիությունը հատկապես, ու Հովհաննեսի դեկավարությամբ, ամենաեռանդուն մասնակցությունը

ունեցավ հայ ազատագրական պայքարի գործում: Գրամփա գյուղը, հակառակ իր փոքրության, պատմական անցյալ և ամուսնություն: Գտնվում է Էջմիածնից 3 կմ հետավորության վրա, Քասախ գետի ափին: Մ. թ. ա. մոտավորապես 4-րդ դարում ուրարտացիների կողմից այստեղ կառուցվում է բազալտ քարերով անառիկ բերդ, որի ամերկները փուլած են 5 հեկտար տարածության վրա:

Տեր Հովհաննեսն քահանան մինչև իր կյանքի վերջը ապրեց խաղաղ ու հանգիստ և վայելեց ժողովորդի ամեն խավի սերն ու հարգանքը: Նրա ամրող կյանքը եղավ ազնիվ նոգերականի և բաղաքացու մի տիպար, ամրիծ ու անաղարտ օրինակ:

Տեր Հովհաննեսը վախճանվեց 1936 թ. փետրվարի 12-ին և նոյին հանձնվեց Գրամփա գյուղի գերեզմանատանը: Հովհարկավորությանը մասնակցեցին շրջանի բոլոր գյուղերի քահանաները, ժողովորդի մեծ քազմություն և ս. Էջմիածնի Մայր Աթոռի միարանության վարդապետներ և եպիսկոպոսներ:

Մանոթություն—Տեր Հովհաննեսն քահանայի իր աշխարհազորայինների խմբով մասնակցության մասին Սարդարապատի մերուսամարտերին և Քյորփալուի ճակատամարտին տես Հ. Գ. Թուրշյանի «Սարդարապատի մերուսամարտը» գրքի երկրորդ հրատարակության 141, 156 և 225 էջերը:

